

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ



Ընդդեմ կանանց սկստմամբ
բռնության կոալիցիա

Coalition to stop violence
against women

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիա» հասարակական կազմակերպությունն (**Կռալիցիա**) ոչ առեւտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է գործում է իրավահավասարության, խտրականության եւ բռնության բոլոր ձեւերի բացառման, օրինականության, բարեխղճության, իրավունքահենք եւ ներառական մոտեցման, անդամների շահերի ընդհանրության, կամավորության, ինքնակառավարման, հաշվետվողականության եւ հրապարակայնության սկզբունքների համաձայն:

1.2. Կռալիցիայի գործունեությունը կարգավորվում է կազմակերպության կանոնադրությամբ, սույն վարքագծի կանոններով (**Վարքագծի կանոններ**), ինչպես նաեւ Կռալիցիայի կանոնադրությանը համապատասխան՝ Ժողովի եւ Խորհրդի ընդունած այլ կանոններով եւ կանոնակարգերով:

1.3. Վարքագծի կանոնները հիմնարար փաստաթուղթ է, որով սահմանվում է Կռալիցիայի արժեքներն ու գործունեության սկզբունքները, Կռալիցիայի անդամների, աշխատողների եւ կամավորների էթիկայի կանոնները, էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգը, ինչպես նաեւ կարգավորում է Վարքագծի կանոններից բխող հարաբերություններին առնչվող այլ հարցեր:

2. ԿՈՍԼԻՏԻՍՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Կռալիցիան ֆեմինիստական արժեքներով առաջնորդվող կազմակերպություն է, որն իր կանոնադրությամբ ամրագրված նպատակների իրականացման համար աշխատում է հանդես է գալիս իբրեւ մեկ միասնական մարմին:

2.2. Կանոնադրության համաձայն՝ Կռալիցիայի կառավարման մարմիններն են Ժողովը, Խորհուրդը եւ Նախագահը:

2.3. Կռալիցիայի բարձրագույն ղեկավար մարմինը Ժողովն է. Կռալիցիայի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ներկայացուցիչ Ժողովում: Ժողովի բոլոր մասնակիցներն ունեն քվեարկության հավասար իրավունք:

2.4. Կռալիցիայի կոլեգիալ կառավարման մարմինը Խորհուրդն է. Ժողովում ներկայացված կազմակերպություններն ունեն երկուական ներկայացուցիչ Խորհրդում:

2.5. Կռալիցիայի գործադիր մարմինը Խորհրդի նախագահն է, ով միաժամանակ նաեւ Կռալիցիայի նախագահն է:

2.6. Կռալիցիայում տարբեր հարցերի կանոնակարգման նպատակով գործադիր մարմնի հրամանով կարող են ձեւավորվել հանձնաժողովներ: Հանձնաժողովների գործունեության կարգն ու ժամկետները սահմանվում են գործադիր մարմնի հրամանով՝ բացառությամբ էթիկայի եւ Գնահատման հանձնաժողովների¹:

¹ Էթիկայի հանձնաժողովի ձեւավորման ընթացակարգը սահմանվում է «Վարքագծի կանոններ»-ով, իսկ Գնահատման հանձնաժողովի գործունեության կարգը՝ Կռալիցիայի «Մարդկային ռեսուրսների կառավարման ուղեցույց»-ով:

2.7. Կոալիցիայի ընթացիկ գործունեության իրականացումն ապահովում է Կոալիցիայի աշխատակազմը:

2.8. Ընթացիկ եւ/կամ ծրագրային գործողությունների իրականացման նպատակով՝ Կոալիցիան կարող է ներգրավել տարբեր ծառայություններ տրամադրող անձանց (այդ թվում՝ կամավորների), խմբերի, նախաձեռնությունների, կազմակերպությունների:

3. ԱՐԺԵՔՆԵՐ

3.1. Կոալիցիայի գործունեության հիմքում ընկած են հետևյալ արժեքները.

- o մարդու հիմնարար իրավունքներ եւ ազատություններ,
- o խտրականության եւ բռնության բոլոր ձևերի բացառում,
- o իրավահավասարություն,
- o փոխադարձ հարգանք,
- o սովորություններ,
- o իրավունքահենք եւ ներառական մոտեցում,
- o հավասարություն, համերաշխություն, սոցիալական արդարություն,
- o թափանցիկություն,
- o հաշվետվողականություն:

4. ԿՈՍԱԼԻՑԻԱՅԻ ԱՆԴԱՄԻ, ԱՇԽԱՏՈՂԻ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

4.1. Վարքագծի կանոնները Ժողովի կողմից ընդունված եւ սահմանված էթիկական նորմերի, համակեցության կանոնների եւ սկզբունքների վրա հիմնված փոխհարաբերությունները կարգավորող նորմեր են, որոնց համապատասխան իրենց գործունեությունն են իրականացնում Կոալիցիայի անդամները, աշխատակիցներն ու կամավորները:

4.2. Կանոնադրությամբ եւ Վարքագծի կանոններով սահմանված իրավունքներից եւ պարտականություններից բացի Կոալիցիայի անդամները, աշխատակիցներն ու կամավորներն իրենց առօրյա գործունեության ընթացքում պարտավոր են հետևել Վարքագծի կանոններին, որոնք պահպանվում են ինչպես Կոալիցիայի անունից գործելիս, այնպես էլ ամենօրյա փոխհարաբերություններում:

4.3. Վարքագծի կանոնների նպատակն է ուղղորդել Կոալիցիայի անդամներին, աշխատողներին եւ կամավորներին՝ առաջնորդվելու Կոալիցիայի որդեգրած հիմնարար արժեքներով ու սկզբունքներով:

4.4. Կոալիցիայի անդամները, աշխատակիցներն ու կամավորներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են.

- o հարգել մարդու արժանապատվությունը, հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ անկախ գենդերային ինքնությունից, սեռից, ռասայից, մաշկի գույնից,

էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից,

- o բացառել խտրականության ցանկացած դրսևւորում,
- o բացառել բռնության, ինչպես նաեւ սեռական շահագործման եւ չարաշահման (այդ թվում՝ երեխաների նկատմամբ) ցանկացած դրսևւորում,
- o իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում պահպանել ձեռք բերված անձնական եւ այլ տեսակի պաշտպանված տեղեկատվության գաղտնիությունը²,
- o միջանձնային հարաբերություններում լինել պրոֆեսիոնալ եւ չվիրավորել միմյանց խոսքերով եւ/կամ գործողություններով,
- o հարգել Կոալիցիայի արժեքներն ու սկզբունքները, կատարել Կոալիցիայի կառավարման մարմինների՝ իրենց լիազորություններին վերաբերող ներքին ակտերի պահանջները,
- o իրենց խոսքով եւ գործողություններով չհակասել Կոալիցիայի վարվող քաղաքականությանը, ռազմավարությանը, ինչպես նաեւ պաշտոնական դիրքորոշումներին,
- o իրենց գործունեության ընթացքում պահպանել թափանցիկություն ու հաշվետվողականություն,
- o աջակցել Կոալիցիայի ընդհանուր նպատակների իրագործմանը:

4.5. Վարքագծի կանոնների խախտում է համարվում թվարկված պարտականություններից որեւէ մեկի ոչ պատշաճ կատարումը եւ/կամ Կոալիցիայի անդամի, աշխատակցի, կամավորի կողմից հետեւյալ գործողություններից որեւէ մեկի կատարումը.

- o անդամը, աշխատակիցը, կամավորը խտրական է վերաբերել գենդերային բռնության (այդ թվում՝ ընտանեկան եւ/կամ սեռական բռնության, սեռական շահագործման եւ չարաշահման) ենթարկված անձանց, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, ԼԳԲՏ* անձանց, ՄԻԱՎ-ով ապրող, ինչպես նաեւ թմրամիջոց գործածող անձանց, էթնիկ փոքրամասնություններին կամ այլ խմբերի ներկայացուցիչներին,

² Գաղտնիք պարունակող տեղեկատվություն է համարվում ՀՀ օրենսդրությամբ անձնական եւ այլ տեսակի պաշտպանված տեղեկատվությունը, ինչպես նաեւ Կոալիցիայի դրամական միջոցների, գործնական ծրագրերի, ռազմավարության, պայմանագրերի, ներկա կամ նախկին աշխատակիցների աշխատավարձի, աշխատանքային ժամերի, աշխատանքից ազատվելու պատճառների, կատարողականի գնահատման վերաբերյալ տեղեկությունը, ներկա կամ նախկին աշխատակիցների, անդամների, կամավորների անձնական տվյալները (ներառյալ, սակայն չաահմանափակվելով՝ տան հասցե, տան կամ անձնական բջջային հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ, առողջական վիճակ եւ այլն), գործընկերների, դոնոր կազմակերպությունների մասին տեղեկությունը, ինչպես նաեւ ցանկացած այլ տեղեկություն, որը Կոալիցիան, նրա կառավարման մարմինները, աշխատակիցները, անդամները, գործընկերները, կամավորները մտադիր են գաղտնի պահել եւ անդամը, աշխատողը, կամավորը գիտի կամ պարտավոր է իմանալ նման մտադրության մասին:

- o անդամը, աշխատակիցը, կամավորը դրսևորել է մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին հակառակ վարքագիծ,
- o անդամը, աշխատակիցը, կամավորը ցանկացած տեսակի բռնություն (այդ թվում՝ հոգեբանական, ֆիզիկական, տնտեսական, սեռական, սեռական շահագործում եւ չարաշահում) է գործադրել այլ անձի/ անձանց հանդեպ,
- o անդամը, աշխատակիցը, կամավորն արտահայտել է/կամ տարածել է (այդ թվում՝ համացանցով) այլ անձի/անձանց եւ/կամ խմբերի նկատմամբ վիրավորանք պարունակող, արժանապատվությունը վիրավորող եւ/կամ ատելության խոսք,
- o անդամը, աշխատակիցը, կամավորն ագրեսիվ վարքագիծ է դրսևորել կամ որեւէ կերպ նվաստացրել է Կոալիցիայի այլ անդամի, աշխատակցի, կամավորի,
- o անդամը, աշխատակիցը, կամավորը վիրավորել, զրպարտել է Կոալիցիայի այլ անդամի, աշխատակցի, կամավորի,
- o անդամը, աշխատակիցը, կամավորն իր գործունեության իրականացման ժամանակահատվածում չի պահպանել ձեռք բերված անձնական եւ այլ տեսակի պաշտպանված տեղեկատվության գաղտնիությունը³, եւ/կամ այն բանավոր, գրավոր հրապարակել, փոխանցել է երրորդ անձի/անձանց, երրորդ անձի/անձանց ուղղակիորեն կամ անուղղակի ընձեռել է նման տեղեկություն հայթայթելու հնարավորություն, այն է՝ թույլատրել, չխոչընդոտել կամ Կոալիցիայի ներքին իրավական ակտերով սահմանված կարգի խախտմամբ այն հնարավոր է դարձրել,
- o անդամը, աշխատակիցը, կամավորն իր գործունեության ընթացքում խախտել է Կոալիցիայի անդամ կազմակերպության շահառուի իրավունքները կամ գործել ի վնաս նրա եւ/կամ խախտել է Կոալիցիայի անդամ կազմակերպության աշխատակցի եւ/կամ կամավորի իրավունքները,
- o անդամը, աշխատակիցը, կամավորը գործել է Կոալիցիայի միասնական որոշմանը հակառակ,
- o անդամը, աշխատակիցը, կամավորն օգտագործել է Կոալիցիայի անվանումը եւ/կամ համբավն անձնական նպատակներով,
- o անդամը, աշխատակիցը, կամավորը Կոալիցիայի անունից հանդես է եկել եւ/կամ հրապարակային հայտարարություններ է տարածել, այդ թվում՝ զանգվածային լրատվական միջոցներով՝ առանց Կոալիցիայի նախնական համաձայնության,
- o անդամը, աշխատակիցը, կամավորը ծավալել է այնպիսի գործունեություն, որը կարող էր որեւէ կերպ վնաս հասցնել կամ որեւէ կերպ խոչընդոտել Կոալիցիայի գործունեությանը կամ համբավին,
- o անդամը, աշխատակիցը, կամավորը Կոալիցիայի ժողովներին/միջոցառումներին բացակայել է առանց նախնական զգուշացման,
- o անդամ կազմակերպությունն իր գործունեության ընթացքում խախտել է իր շահառուի իրավունքները կամ գործել ի վնաս նրա,

³ Տե՛ս N° 2 ծանոթագրությունը

- o անդամ կազմակերպությունը խախտել է իր աշխատակցի եւ/կամ կամավորի իրավունքները:

4.6. Կոալիցիայի Էթիկայի հանձնաժողովի գնահատմամբ այլ գործողություններ եւս կարող են համարվել Վարքագծի կանոնների խախտում, եթե անդամների, աշխատակիցների, կամավորների վարքագիծն այս կամ այն կերպ հակասում է Կոալիցիայի արժեքներին եւ սկզբունքներին:

5. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

5.1. Վարքագծի կանոնների պահպանման նպատակով՝ Կոալիցիան ձեւավորվում է Էթիկայի հանձնաժողով:

5.2. Էթիկայի հանձնաժողովը Վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնող խորհրդատվական, կոլեգիալ մարմին է, որը հաշվետու է Կոալիցիայի Ժողովին:

5.3. Էթիկայի հանձնաժողովի ձեւավորման կարգը.

5.3.1. Էթիկայի հանձնաժողովը ձեւավորվում է Կոալիցիայի անդամներից եւ աշխատակիցներից:

5.3.2. Էթիկայի հանձնաժողովի կազմում ընտրությամբ ընդգրկվում են 3 անձինք:

5.3.3. Ընտրությունը կարող է իրականացվել ինչպես էլեկտրոնային քվեարկությամբ (ա), այնպես էլ պարզ թղթային եղանակով (բ). ընտրության իրականացման ձեւը որոշվում է հաշվի առնելով համապատասխան ժամանակահատվածում առկա պայմանները, ինչպես օրինակ՝ արտակարգ եւ/կամ ռազմական դրությունը եւ այլն:

ա) էլեկտրոնային քվեարկությունն իրականացվում է անանուն. առցանց հարթակում Խորհրդի եւ անձնակազմի անձանց անուններով կազմվում է ցուցակ: Քվեարկության արդյունքում ձայների մեծամասնությունը ստացած 3 անձինք ընտրվում են որպես Էթիկայի հանձնաժողովի անդամներ.

բ) պարզ թղթային վիճակահանության եղանակով Կոալիցիայի Խորհրդի եւ անձնակազմի ընդհանուր թվով առանձնացվում են դատարկ թղթեր, որոնցից 3-ի վրա գրված է «*Էթիկայի հանձնաժողովի անդամ*»: Վիճակահանությամբ այն 3 անձինք, ում մոտ հայտնվում են այդ թղթերը, ընտրվում են որպես Էթիկայի հանձնաժողովի անդամներ:

5.3.4. Էթիկայի հանձնաժողովի անդամները փոփոխվում են յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ՝ բացառությամբ 5.4.7. կետում նշված դեպքի:

5.3.5. Միեւնույն կազմակերպությունից երկու անձ միաժամանակ չեն կարող ընդգրկվել Էթիկայի հանձնաժողովի կազմում:

5.3.6. Կոալիցիայի աշխատակազմից միաժամանակ երկու անձ չեն կարող ընդգրկվել Էթիկայի հանձնաժողովի կազմում:

5.3.7. Այն դեպքերում, երբ արդեն առկա է ձեւավորված Էթիկայի հանձնաժողով, սակայն Վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման դեպք է առաջացել, որն որեւէ կերպ

առնչվում է ձեռավորված Էթիկայի հանձնաժողովի անդամներից մեկին (կազմակերպությանը), ապա համապատասխան անդամը դուրս է գալիս հանձնաժողովից եւ նրա փոխարեն վիճակահանության արդյունքում ընտրվում է այլ անդամ:

5.3.8. Այն դեպքերում, երբ ընտրված Էթիկայի հանձնաժողովի անդամն որեւէ կերպ կողմնակալ դիրքորոշում ունի ենթադրյալ խախտում կատարած անձի նկատմամբ կամ առկա է հնարավոր շահերի բախում, ապա Ժողովի որոշմամբ համապատասխան անդամը դուրս է գալիս Էթիկայի հանձնաժողովի կազմից եւ նրա փոխարեն վիճակահանության արդյունքում ընտրվում է այլ անդամ:

5.3.9. Միեւնույն անձն երկու անգամ անընդմեջ չի կարող ընդգրկվել Էթիկայի հանձնաժողովի կազմում՝ բացառությամբ 5.4.7. կետում նշված դեպքի:

5.4. Էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգը.

5.4.1. Ձեռավորված Էթիկայի հանձնաժողովը հետեւում է Կոալիցիայի անդամների, աշխատակիցների կողմից Վարքագծի կանոնների պահպանմանը:

5.4.2. Վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման դեպքում Էթիկայի հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ կամ Կոալիցիայի անդամի/աշխատակցի գրավոր դիմումի հիման վրա ուսումնասիրում է տվյալ հարցը՝ դիմումը ստանալու կամ նախաձեռնության պահից 5-օրյա ժամկետում:

5.4.3. Էթիկայի հանձնաժողովն ապահովում է Կոալիցիայի անդամի/աշխատակցի լավելու իրավունքը՝ ողջամիտ ժամկետ տրամադրելով գրավոր բացատրություն ներկայացնելու համար: Եթե սահմանած ժամկետում Կոալիցիայի անդամը/աշխատակիցը չի ներկայացնում բացատրություն, ապա հանձնաժողովը կարող է որոշում ընդունել առանց բացատրության, ինչը, սակայն, չի սահմանափակում Ժողովում հարցի վերաբերյալ տվյալ անձի՝ կարծիք արտահայտելու իրավունքը:

5.4.4. Էթիկայի հանձնաժողովը կարող է ըստ անհրաժեշտության հանդիպում եւ/կամ քննարկում նախաձեռնել ենթադրյալ խախտում կատարած անձի եւ ենթադրյալ խախտման մասին դիմում ներկայացրած անձի/անձանց միջեւ:

5.4.5. Ենթադրյալ խախտման մասին Էթիկայի հանձնաժողովն ուսումնասիրությունները կատարում է առավելագույնը 10-ն օրվա ընթացքում եւ կատարված արդյունքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը արձանագրությամբ տրամադրում է Ժողովին՝ միաժամանակ ներկայացնելով նաեւ հարցի վերաբերյալ հանձնաժողովի խորհրդատվական բնույթ կրող դիրքորոշումը:

5.4.6. Այն պարագայում, երբ Էթիկայի հանձնաժողովի անդամները հարցի կապակցությամբ չեն ունենում միատեսակ մոտեցում, ապա յուրաքանչյուր անդամ առանձին է ներկայացնում իր դիրքորոշումը:

5.4.7. Այն դեպքերում, երբ Էթիկայի հանձնաժողովն ուսումնասիրում է ենթադրյալ խախտման որեւէ դեպք եւ ի հայտ է գալիս Վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման նոր դեպք (դեպքեր), որն ենթադրում է անհապաղ արձագանք, ապա Էթիկայի հանձնաժողովը տեղեկացնում է այդ մասին Կոալիցիայի Ժողովին եւ հայտնում հանձնաժողովի գործունեության հնարավոր երկարաձգման մասին:

5.4.8. Այն պարագայում, երբ Էթիկայի հանձնաժողովը հայտնում է իր գործունեության հնարավոր երկարաձգման մասին, սակայն Ժողովի դիտարկմամբ առաջացած ենթադրյալ խախտման նոր դեպքի ուսումնասիրության անկողմնակալության պահպանման նպատակով անհրաժեշտություն է առաջանում փոփոխություն կատարել հանձնաժողովի կազմում, ապա Ժողովի որոշմամբ գործող Էթիկայի հանձնաժողովի համապատասխան անձի (անձանց) գործունեությունը ժամանակավորապես կասեցվում է եւ ընտրվում է այլ անձ՝ ենթադրյալ խախտման նոր դեպքի ուսումնասիրության համար:

5.4.9. 5.4.8. կետում նկարագրված դեպքի ուսումնասիրության ավարտից հետո՝ Էթիկայի հանձնաժողովի համապատասխան անձի (անձանց) գործունեությունը վերսկսում է եւ շարունակվում է նախկին ենթադրյալ խախտման դեպքի ուսումնասիրությունը:

6. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ

- 6.1.** Կոալիցիայի ներսում յուրաքանչյուր որոշում կայացվում է անդամների քվեարկությամբ, բացառությամբ կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:
- 6.2.** Կանոնադրության համաձայն՝ Ժողովն իրավագոր է, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին. Ժողովն որոշումներ է ընդունում Ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Կոալիցիայի կանոնադրությամբ տվյալ որոշման ընդունման համար այլ հարաբերակցություն նախատեսված չէ:
- 6.3.** Կոալիցիայի անդամների մեկ երրորդի պահանջի դեպքում, եւ/կամ գործադիր մարմնի նախաձեռնությամբ, ոչ ուշ, քան 5 օրացուցային օրվա ընթացքում հրավիրվում է եւ տեղի է ունենում Կոալիցիայի արտահերթ Ժողով:
- 6.4.** Կանոնադրության համաձայն՝ Խորհրդի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում են Խորհրդի անդամների առնվազն մեկ երկրորդը. Խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ. ձայների հավասարության դեպքում՝ Նախագահի ձայնը վճռորոշ է:
- 6.5.** Երբ Ժողովի եւ/կամ Խորհրդի նիստերն իրավագոր են, սակայն առկա են բացակա անդամներ, ապա բացակա անդամների ձայները կարող են հաշվի առնվել նամակագրության միջոցով՝ համապատասխան նիստերից հետո 3 աշխատանքային օրերի ընթացքում:
- 6.6.** Էթիկայի հանձնաժողովի կողմից Վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման մասին վերջնական որոշումները կայացվում են Ժողովի կողմից՝ Ժողովի անցկացման նույն պայմաններով՝ գաղտնի քվեարկությամբ:
- 6.7.** Վարքագծի կանոնների խախտման դեպքում Ժողովը որպես կարգապահական պատասխանատվության միջոց Կոալիցիայի անդամի կազմակերպության կամ անդամ կազմակերպության ներկայացուցչի նկատմամբ կարող է կիրառել.
- նախազգուշացում,
 - նկատողություն,

- հեռացման մասին որոշում:

6.8. Կատարված խախտման ծանրությամբ պայմանավորված՝ Ժողովը կարող է կիրառել պատասխանատվության ցանկացած միջոց, այդ թվում՝ առանց նախազգուշացման, նկատողության կայացնել Կոալիցիայի անդամ կազմակերպության կամ անդամ կազմակերպության ներկայացուցչի հեռացման մասին որոշում: Ժողովը որոշումները կայացնում է գնահատելով կատարված խախտումի ազդեցությունն ու հետեւանքները Կոալիցիայի գործունեության վրա:

6.9. Կոալիցիայի աշխատողների կողմից Վարքագծի կանոնները չպահպանելը համարվում է կարգապահական խախտում եւ ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ կարող է կիրառվել հետեւյալ կարգապահական տույժերից որեւիցե մեկը.

- նկատողություն,
- խիստ կատողություն,
- աշխատանքից ազատում:

6.10. Մինչ կարգապահական տույժի կիրառումը Կոալիցիան պարտավոր է աշխատակցից պահանջել գրավոր բացատրություն: Եթե սահմանած ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

6.11. Կոալիցիայի աշխատողների կողմից Վարքագծի կանոնների չպահպանման հետեւանքով կարգապահական տույժի տեսակը որոշում է գործադիր մարմինը՝ հիմք ընդունելով խախտման ծանրությունը եւ դրա հետեւանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները եւ աշխատողի՝ նախկինում դրսեւորած վարքագիծը:

6.12. Կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ մեկամսյա ժամկետում:

6.13. Կոալիցիայի կամավորների կողմից Վարքագծի կանոնների ոչ պատշաճ կատարման եւ/կամ չպահպանման առնչությամբ առաջացած հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7. ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

7.1. Կանոնադրության համաձայն՝ Կոալիցիայի անդամակցությունը բաց է մարդու իրավունքներով զբաղվող ոչ առեւտրային կազմակերպությունների եւ անձանց համար:

7.2. Անդամակցության համար հավակնորդ դիմորդները կարող են լինել անձինք, հասարակական, ոչ կուսակցական կազմակերպությունները, որոնք հանձն են առել մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների զարգացման եւ պաշտպանության գործընթացը:

- 7.3. Անդամակցության համար հավակնորդ դիմորդները նախեւառաջ պետք է լրացնեն Կոալիցիայի պաշտոնական կայքէջում տեղադրված անդամության հայտն ու այն ուղարկեն Կոալիցիայի պաշտոնական էլեկտրոնային հասցեին:
- 7.4. Համապատասխան հավակնորդները կարող են անդամակցել Կոալիցիային, եթե ունեն Կոալիցիայի Խորհրդի անդամներից առնվազն երկուսի երաշխավորումը:
- 7.5. Երաշխավորումը ստանալուց հետո հավակնորդ դիմորդների անդամակցության հարցը հաստատվում է Կոալիցիայի գործադիր մարմնի որոշմամբ:
- 7.6. Հավակնորդ դիմորդները մինչ Կոալիցիայի լիիրավ անդամություն ձեռք բերելը ստանում են Կոալիցիային «Աջակցող անդամի» կարգավիճակ:
- 7.7. «Աջակցող անդամը» 1 տարի ժամկետով ակտիվ ներգրավում է Կոալիցիայի գործունեությանը՝ համահավասար կիսելով Կոալիցիայի անդամների պարտավորությունները՝ բացառությամբ անդամավճար վճարելու պարտավորության:
- 7.8. «Աջակցող անդամը» 1 տարվա ընթացքում կարող է մասնակցել Կոալիցիայի Ժողովի եւ Խորհրդի նիստերին, սակայն առանց քվեարկության իրավունքի:
- 7.9. «Աջակցող անդամը» կարող է զրկվել իր կարգավիճակից՝ Վարքագծի կանոնների խախտման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում:
- 7.10. «Աջակցող անդամի»՝ Կոալիցիային անդամագրվելու հարցը քննարկվում է սահմանված ժամկետի ավարտից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խորհրդի որոշմամբ նախատեսվում է ավելի կարճ ժամկետ:

8. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 8.1. Կոալիցիայի անդամներն իրավունք ունեն.
- 8.1.1. ազատ արտահայտել իրենց կարծիքն ու հանդես գալ Կոալիցիայի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի շուրջ առաջարկներով,
- 8.1.2. ընտրել եւ ընտրվել կազմակերպության կառավարման մարմիններում,
- 8.1.3. մասնակցել Կոալիցիայի կողմից բարձրացված հարցերի քննարկմանն ու որոշումների կայացմանը:
- 8.2. Կոալիցիայի անդամները պարտավոր են.
- 8.2.1. պահպանել սույն Վարքագծի կանոններով սահմանված էթիկական նորմերը,
- 8.2.2. վճարել տարեկան սահմանված 10.000 ՀՀ դրամ անդամավճար մինչեւ համապատասխան տարվա առաջին եռամսյակի վերջը:
- 8.3. Կոալիցիայի անդամների մնացյալ իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են կազմակերպության կանոնադրությամբ:

9. ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 9.1. Կոալիցիայի անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կոալիցիայից՝ կանոնադրությամբ նախատեսված կարգով տեղեկացնելով Կոալիցիայի գործադիր մարմնին:
- 9.2. Գործադիր մարմնի որոշմամբ՝ անդամավճար չվճարած անդամը կարող է զրկվել Կոալիցիայի անդամությունից:
- 9.3. Ժողովի կողմից հաստատված էթիկական կանոնների խախտման դեպքում, խախտում (խախտումներ) կատարած անդամի (անդամների), անդամությունը Կոալիցիային դադարեցվում է:


10. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 10.1. Վարքագծի կանոններն ուժի մեջ են մտնում Ժողովի կողմից հաստատվելու պահից:
- 10.2. Վարքագծի կանոններում փոփոխություններ եւ/կամ լրացումներ կարող են կատարվել միայն Ժողովի կողմից:
- 10.3. Վարքագծի կանոնների վերաբերյալ մեկնաբանություններ (պարզաբանումներ) են տրվում Խորհրդի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի համաձայն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»
հասարակական կազմակերպության Խորհրդի կողմից
«9» սեպտեմբեր, 2021 թվականին եւ բաղկացած է «11» էջից

Արձանագրություն N° 09-1/2021

Տարեիկ Աղաբեկյան 

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ նախագահ

